ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/03

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Գորիսի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Էլդոգար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Գորիսի համայնքապետարանի ներկայացուցիչներ՝ Մ. Հովսեփյանի, Ն. Մնացականյանի,
«Էլդոգար» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Էլդոգար» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 25.01.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել՝

- «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադերեցնելու՝ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի և «Անապատ-2» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտերը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու մասին որոշումները,

- «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադերեցնելու՝ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ին ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 25.01.2021թ.-ին:

25.01.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/03 համարի ծածկագիրը:

03.02.2021թ.-ին և 12.02.2021թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 03.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.02.2021թ.-ին:

2. **<u>«Էլդոգար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Էլդոգար» ՍՊԸ-ն 25.01.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Գորիսի համայնքապետարանի կարիքների համար՝ հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին ի թիվս այլ ընկերությունների մասնակցության հայտ են ներկայացրել նաև «Էլդոգար» ՍՊԸ-ն, «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ն և «Անապատ-2» ԱԿ-ն:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.01.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4 կետի համաձայն 1 և 2 չափաբաժինների մասով «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Իսկ այնուհետև gnumner.am համացանցային կայքից տեղեկանում ենք, որ համաձայն պայմանագիր կնքելու մասին հայտարարության որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ է ճանաչվել նաև «Անապատ-2» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտը վերջինս էլ ճանաչվել է 1-ին չափաբաժնի մասով որպես երկրորդ տեղ զբաղեցնող մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար ե մերժվում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է փա զոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Հրավերի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում...:

«Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից հարցում էր ներկայացվել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որով խնդրել ենք՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով՝ խնդրում եմ անհապաղ տրամադրել «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտ ներկայացրած «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի և «Անապատ-2» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտի ողջ փաթեթները /այդ թվում լիազորագիրը և հայտի ապահովումը/:

Ուսումնասիրելով վերը նշված փաստաթղթերը գտնում ենք, որ «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավունք չուներ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի և «Անապատ-2» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար, մասնավորապես՝

- «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած վճարման անդորրագիրը /որպես հայտի ապահովում/ ներկայացվել է հայտեր ներկայացնելու վերջնաժամկետից հետո, այն է 20.01.2021թ. ժամը 17:00-ին և հայտի փաթեթի փաստաթղթերը ստորագրված է եղել այդպիսի լիազորություն չունեցող անձի կողմից:

- «Անապատ-2» ԱԿ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքները /որպես հայտի ապահովում/ ներկայացվել է հայտեր ներկայացնելու վերջնաժամկետից հետո, այն է 22.01.2021թ.:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի հայտեր ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 20.01.2021թ. ժամը 16:00-ն:

Մինչդեռ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացվել է կանխիկ փողի տեսքով վճարված անդորրագիր՝ որտեղ վճարման ժամ ֆիքսված է 17:00-ն, այսինքն ներկայացված վճարման անդորրագիրը ներկայացվել են հայտեր ներկայացնելու վերջնաժամկետից հետո, այն է՝ 20.01.2021թ. ժամը 17:00-ն, որը իսկզբանե չի եղել հայտի փաթեթում և անհասկանալի է թե ինչպես է հայտնվել գնահատող հանձնաժողովի մոտ, իսկ հայտի փաթեթը ստորագրված է եղել այդպիսի լիազորություն չունեցող անձի կողմից:

Ինչ վերաբերվում է «Անապատ-2» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթին, ապա հայտնում ենք, որ «Անապատ-2» ԱԿ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքները /որպես հայտի ապահովում/ ներկայացվել է հայտեր ներկայացնելու վերջնաժամկետից հետո, այն է 22.01.2021թ.:

Հատկանշական է այն փաստական հանգամանքը, որ թե «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի, և թե «Անապատ-2» ԱԿ-ի հայտի փաթեթում ի սկզբանե չի եղել լիազորագիրը /«Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի մասով/ և երկու Ընկերությունների հայտերի ապահովումները, և անհասկանալի է մնում, թե այդ փաստաթղթերը ինչպես է հայտնվել գնահատող հանձնաժողովի մոտ և, որ ամենակարևորն է ինչպես է գնահատող հանձնաժողովի կողմից այդ հայտերը գնահատվել հրավերի պահանջներին համապատասխան:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել՝

- «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադերեցնելու՝ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի և «Անապատ-2» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտերը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու մասին որոշումները,

- «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադերեցնելու՝ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ին ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Ի լրումն 25.01.2021թ.-ին ներկայացված բողոքի, 01.02.2021թ.-ին «Էլդոգար» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն, որով հայտնել է հետևյալը.

«Ինչպես արդեն հայտնել ենք, Գորիսի համայնքապետարանի կարիքների համար՝ հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնանշման հարցում, որին ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ են ներկայացրել նաև «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ն և «Անապատ-2» ԱԿ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.01.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4 կետի համաձայն՝ 1 և 2 չափաբաժինների մասով «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից՝ որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, իսկ «Անապատ-2» ԱԿ-ի հայտը, գնահատվել է բավարար, և վերջինս էլ ճանաչվել է 1-ին չափաբաժնի մասով որպես երկրորդ տեղ զբաղեցնող մասնակից:

Ուսումնասիրելով գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված փաստաթղթերը և Գորիսի համայնքապետի դիրքորոշումը՝ գտնում ենք, որ «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների մի շարք խախտումներ, և տվյալ պայմաններում հանձնաժողովը իրավունք չուներ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի և «Անապատ-2» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար, հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Հրավերի 4.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտապատված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Հրավերի 7.4 կետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում...:

Հրավերի 8.10 կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շրկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շրկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության

բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով, «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի հայտի փաթեթում բացակայել է հայտի ապահովումը, այնուհետև ՍՊԸ-ի կողմից ներկայացրած վճարման անդորրագիրը /որպես հայտի ապահովում/ ներկայացվել է հայտեր ներկայացնելու վերջնաժամկետից հետո, այն է՝ 20.01.2021թ. ժամը 17:00-ին և հայտի փաթեթի փաստաթղթերը ստորագրված են եղել այդպիսի լիազորություն չունեցող անձի կողմից (հայտում բացակայել է նաև լիազորագիրը):

Վերը նշված փաստը ապացուցվում է նաև Գորիսի համայանքապետի կողմից ներկայացված դիրքորոշմամբ, որով մասնավորապես, հայտվել է հետևյալը. «Մինչև գնահատող հանձնաժողովի նիստի ավարտը «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ն /առանց անհամապատասխանությունների վերաբերյալ ծանուցումը ստանալու/ Գորիսի համայնքապետարանի պաշտոնական էլ. փոստին է ուղարկել «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի լիազորագիրը և հայտի ապահովումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնային առաջարկը երկու չափաբաժինների մասով համայնքի բյուջեի համար բավականին մեծ տնտեսում է, իսկ գանձապետական հաշվին վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից արտատպված տարբերակը ներկայացվել է մինչև նիստի ավարտը՝ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար: «Անապատ-2» ԱԿ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքները /որպես հայտի ապահովում/ ներկայացվել է հայտեր ներկայացնելու վերջնաժամկետից հետո, այն է՝ 22.01.2021թ.:

Վերը նշված փաստը ապացուցվում է նաև Գորիսի համյանքապետի կողմից ներկայացված դիրքորոշմամբ, մասնավորապես՝ «Անապատ-2» ԱԿ-ն բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովումը Գորիսի համանքապետարանի պաշտոնական էլ. փոստին է ուղարկել 22.01.2021թ...., հաշվի առնելով որ «Անապատ-2» ԱԿ-ն հանդիսանում է վստահելի գործընկեր՝ վերջինիս հայտը գնահատվել է բավարար:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի հայտեր ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 20.01.2021թ. ժամը 16:00-ն:

Մինչդեռ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացվել է կանխիկ փողի տեսքով վճարված անդորրագիր՝ որտեղ վճարման ժամ ֆիքսված է 17:00-ն, այսինքն՝ ներկայացված վճարման անդորրագիրը ներկայացվել են հայտեր ներկայացնելու վերջնաժամկետից հետո, այն է՝ 20.01.2021թ. ժամը 17:00-ն, որը ի սկզբանե չի եղել հայտի փաթեթում և անհասկանալի է, թե ինչպես է հայտնվել գնահատող հանձնաժողովի մոտ, իսկ հայտի փաթեթը ստորագրված է եղել այդպիսի լիազորություն չունեցող անձի կողմից, իսկ «Անապատ-2» ԱԿ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքները /որպես հայտի ապահովում/ ներկայացվել է հայտեր ներկայացնելու վերջնաժամկետից հետո, այն է՝ 22.01.2021թ.:

Հատկանշական է նաև այն փաստը, որ վերը նշված հանգամանքերը փաստվում են նաև Գորիսի համայնքապետարանի դիրքորոշմամբ, իսկ գնահատող հանձնաժողովի որոշումները կայացվել են ոչ թե՝ հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենսդրության դրույթները, այլ՝ այն, որ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը երկու չափաբաժինների մասով համայնքի բյուջեի համար բավականին մեծ տնտեսում է, իսկ «Անապատ-2» ԱԿ-ն հանդիսանում է վստահելի գործընկեր՝ և հենց այս հանգամանքները հիմք ընդունելով վերջիններիս հայտերը գնահատվել են բավարար:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության հետևյալ խախտումները.

Նախ, սույն գործի փաստական հանգամանքներով հաստատվել է , որ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի և «Անապատ-2» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտերում բացակայել են հրավերով պահանջված փաստաթղթերը՝ հայտի ապահովումը և լիազորագիրը: Սակայն գնահատող հանձնաժողովը չի կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները, չի արձանագրել ներկայացված հայտում անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, և գնահատել ոչ հայտով ներկայացրած փաստաթղթերը, ինչը հանդիսանում է Կարգի նշված պահանջների խախտում:

Պատվիրատուն 20.01.2021թ. ժամը 16:00 տեղի ունեցած հայտերի բացման և գնահատման նիստի ժամանակ օբյեկտիվորեն չէր կարող գնահատել «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված կանխիկ փողի տեսքով վճարված անդորրագիրը, որտեղ վճարման ժամ ֆիքսված է 17:00-ն, այսինքն՝ հայտերի գնահատման նիստի ժամից հետո: Նույնը վերաբերում է «Անապատ-2» ԱԿ-ի կողմից ներկայացված

բանկային երաշխիքներին, որոնք տրված են 22.01.2021թ.: Այլ կերպ ասած, վերոհիշյալը հիմնավորում է, որ «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնահատող հանձնաժողովը պետք է 20.01.2021թ. ժամը 16:00 տեղի ունեցած հայտերի բացման և գնահատման նիստի ժամանակ արձանագրեր անհամապատասխանություններ տվյալ մասնակիցների հայտերի մեջ, այլ ոչ թե սպասեր, որ որոշ ժամանակվա ընթացքում տվյալ մասնակիցները լրացնեին իրենց բացերը՝ առանց համապատասխան շտկման պահանջ ստանալու:

Ինչպես արդեն նշել ենք, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Միևնույն ժամանակ, Հրավերի 7.4 կետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

Մինչդեռ, «Անապատ-2» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը՝ բանկային երաշխիքը, տրված է 22.01.2021թ., այսինքն հայտը ներկայացնելու օրվան՝ 20.01.201թ. հաջորդող միայն երկրորդ օրը: Այլ կերպ ասած, Ընթացակարգի հրավերի պահանջների խախտմամբ, տվյալ բանկային երաշխիքը չի եղել վավեր հայտը ներկայացնելու օրը, ինչը նշանակում է, որ այս դեպքում մասնակցի հայտը պետք է գնահատվեր անբավավար և մերժվեր:

«Անապատ-2» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը՝ բանկային երաշխիքը, բավարար գնահատելիս՝ գնահատող հանձնաժողովը թույլ է տվել նաև այլ խախտումներ: Նախ, գնահատող հանձնաժողովը բացարձակապես ուշադրություն չի դարձրել, որ տրված բանկային երաշխքիներում սխալ է նշվել բենեֆիցիարի հաշվեհամարը, որին բանկը պարտավորվել է փոխանցել հայտի ապահովման գումարը, մասնավորապես Ընթացակարգի հրավերով նշված 900008000466 հաշվեհամարի փոխարեն նշվել է ինչ-որ 900285125382 հաշվեհամար:

Բացի այդ, Ընթացակարգի հրավերի Հրավերի 4.3-րդ կետը պահանջում է, որ մասնակիցը հայտի ապահովման բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Տվյալ պարագայում ակնհայտ է, որ «Անապատ-2» ԱԿ-ն օբյեկտիվորեն չէր կարող հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝, այսինքն 21.01.2021թ., ուղեկցող գրությամբ ներկայացնել

բանկային երաշխիքի բնօրինակը, քանի որ այն տրվել էր մասնակցին բանկի կողմից միայն 22.01.2021թ.:

Մինչդեռ Հրավերի 8.10 կետի համաձայն՝ եթե մասնակիցը սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, ապա վերջինիս հայտը մերժվում է:

Իսկ ինչպես երևում է վերոշարադրված վերլուծությունից, վերոհիշյալ ոչ մի փաստը հիմք չի հանդիսացել գնահատող հանձնաժողովի համար «Անապատ-2» ԱԿ-ի հայտը մերժելու համար, քանի որ, ինչպես նշում է Գորիսի համանքապետը, հաշվի է առնվել, որ «Անապատ-2» ԱԿ-ն հանդիսանում է վստահելի գործընկեր:

Անդրադառնալով «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի կողմից ոչ հայտի փաթեթով, այլ հետագայում առանց շտկման պահանջի ներկայացրած լիազորագրին, պետք է արձանագրել, որ տվյալ լիազորագիրը նույնպես չի հանդիսանում պատշաճ փաստաթուղթ՝ հայտի փաթեթը այլ անձի կողմից ստորագրելու համար: Մասնավորապես, լիազորագրով Գևորգ Մանգասարյանին վերապահվել է հետևյալ լիազորությունը. «...ընկերության անունից ստորագրելու ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021 ծածկագրով ՀՐԱՎԵՐԻՆ ներկայացվող փաստաթղթերը»: Անհայտ է, որ նման բովանդակության լիազորագրի պայմաններում Գևորգ Մանգասարյանը իրավունք չուներ ստորագրելու ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021 ծածկագրով գնանշման հարցմանը ներկայացվող հայտի փաթեթը, մինչդեռ անգամ այլ բովանդակությամբ լիազորագրի պայմաններում «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի հայտը ոչ իրավաչափորեն գնահատվել է բավարար:

Վերոհիշյալը փաստում է, որ ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, չիրականացնելով պատշաճ վարչարարություն, գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, ոչ օրինական դրդապատճառներով բավարար է գնահատել բավարար գնահատման ոչ ենթակա «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի և «Անապատ-2» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտերը:»:

3. **<u>Գորիսի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.**

Բողոքներ քննող անձը 25.01.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/857-2021 գրությամբ դիմել է Գորիսի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից 25.01.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 03.02.2021թ.-ին հրավիրված նիստին:

Պատվիրատուն 27.01.2021թ.-ին ներկայացված թիվ 01/05/02-110 գրությամբ ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանկել 2021 թվականի հունվարի 20-ի ժամը 16:00-ն: Հայտերը բացվել են էլեկտրոնային եղանակով Armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով: ժամը 16:00-ի դրությամբ Armeps.am համակարգում հայտ ներկայացրած մասնակիցների հայտերից բացակայում էր՝

- «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի լիազորագիրը և կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահոկումը:

- «Անապատ-2» ԱԿ-ի կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովումը:

Մինչ հանձնաժողովի անդամների կողմից մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրումը և նիստի ամփոփումը «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ն, առանց անհամապատասխանությունների վերաբերյալ ծանուցում ստանալու, իր էլեկտրոնային հասցեից Գորիսի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային հասցեին է ուղարկել «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի լիազորագիրը և կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը: Ելնելով այն հանգամանքից, որ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի գնային առաջարկը երկու չափաբաժնների մասով համայնքի բյուջեի համար բավական մեծ տնտեսում է ենթադրում/ 1 և 2 չափաբաժինների նախահաշվային արժեքների համեմատ անտեսումը կազմում է 32 666 733 ՀՀ դրամ, իսկ 2-րդ տեղ զբաղեցնող մասնակիցների գնային առաջարկների համեմատ տնտեսումը կազմում է 24 996 853 ՀՀ դրամ/ և Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից արտատպված տարբերակը ներկայացվել է մինչև նիստի ավարտը «Բնսթ Ռոուդ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

«Անապատ-2» ԱԿ-ն բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովումը Գորիսի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային հասցեին է ուղարկել 22.01.2021թ.: Գորիսի համայնքապետարանի և «Անապատ-2» ԱԿ-ի միջև 22.07.2020թ. կնքվել է «ՀՀ ՍՄԳՀ ԲՄԱՇՁԲ 01/2020» ծածկագրով 90 900 000 (իննսուն միլիոն ինը

հարյուր հազար) ՀՀ դրամի պայմանագիր աշխատանքների կատարման վերջնաժամկետ սահմանելով մինչև 20.12.2020թ.: Սակայն համաճարակային և պատերազմական իրավիճակներով պայմանավորված աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգվել է, ինչի պատճառով Գորիսի համայնքապետարանը մասնակցին չի վերադարձրել որակավորման և պայմանագրի ապահովումները: «Անապատ-2» ԱԿ-ի «ՀՀ ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցության համար բանկային երաշխիքի ուշացումը պայմանավորված է եղել նաև այլ հանգամանքով: Ելնելով վերը նշվածից և հաշվի առնելով այն, որ «Անապատ-2» ԱԿ-ն հանդիսանում է վստահելի գործընկեր վերջինիս հայտը ևս գնահատվել է բավարար: Ինչ վերաբերվում է «Էլդոգար» ՍՊԸ-ի բողոքի մեջ նշված այն տեղեկությանը, որ «Անապատ-2» ԱԿ-ի լիազորագիրը ի սկզբանե չի եղել հայտում, իրականությանը չի համապատասխանում:»:

4. **<u>ԳԲՔԱ-LO</u>**-2021/03 **<u>բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Գորիսի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 13.01.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 20.01.2021թ.-ի ժամը 16:00 ներառյալ, որին ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել նաև «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ն, «Անապատ-2» Ա/Կ-ն և «Էլդոգար» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 20.01.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին չափաբաժնի համար որպես պայմանագրի ընդհանուր գումար «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ն նշել է 28 168 562 ՀՀ դրամ, «Անապատ-2» Ա/Կ-ն՝ 38 594 000 ՀՀ դրամ, բողոքաբեր՝ «Էլդոգար» ՍՊԸ-ն՝ 40 000 000 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի համար՝ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ն նշել է 32 428 585 ՀՀ դրամ, բողոքաբեր՝ «Էլդոգար» ՍՊԸ-ն՝ 47 000 000 ՀՀ դրամ, «Անապատ-2» Ա/Կ-ն 47 407 000 ՀՀ դրամ:

iv. Նույն արձանագրության 2.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ հրավերով սահմանված հայտերի կազմման և ներկայացման, բացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանում է մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, ինչով պայմանավորված դրանք գնահատվել են բավարար և արձանագրության 4.2 կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ին՝ որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

v. «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ն 20.01.2021թ.-ին էլ. փոստով Պատվիրատուին ուղղված թիվ 2-21 գրությամբ վերջինիս է ներկայացրել 20.01.2021թ.-ին տրված թիվ 192 և թիվ 193 կանխիկ փողի ձևով ներկայացված վճարման հանձնարարագրերը (այսուհետ նաև՝ Հանձնարարագրեր)՝ համապատասխանաբար 2 495 400 ՀՀ դրամի և 2 167 900 ՀՀ դրամի չափով՝ որպես «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնման ընթացակարգի հայտի ապահովում, ինչպես նաև ներկայացվել է 20.01.2021թ.-ին տրված թիվ 1-21 համարի լիազորագիրը:

vi. ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի պատասխան Բողոքներ քննող անձի 09.02.2021թ.-ի թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/2417-2021 գրության՝ հայտնել է, որ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի կողմից 20.01.2021թ.-ի հայտի ապահովման թիվ 900008000466 հաշվին վճարված 2 167 900 ՀՀ դրամ և 2 495 400 ՀՀ դրամ գումարները հաշվեգրվել են գանձապետական հիշյալ հաշվին 21.01.2021թ.-ին, ժամը՝ 10:07-ին:

vii. Պատվիրատուի կողմից Բողոքներ քննող անձին ներկայացված գրանցամատյանի համաձայն՝ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վճարման հանձնարարագրերը հաշվառվել են պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում 20.01.2021թ.-ին:

viii. «Անապատ-2» Ա/Կ-ն «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից 22.01.2021թ.-ին տրամադրված թիվ 652-712 և 652-711 բանկային երաշխիքները (այսուհետ նաև՝ Երաշխիք)՝ որպես հայտի ապահովում:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից 25.01.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ

ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Գորիսի համայնքապետարանի կողմից հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 13.01.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/29» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով

սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Հրավերի 7.1-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գորիսի համայնքապետարանի կողմից հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 13.01.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ն, «Անապատ-2» Ա/Կ-ն և «Էլդոգար» ՍՊԸ-ն: «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ն 20.01.2021թ.-ին էլ. փոստով Պատվիրատուին ուղղված թիվ 2-21 գրությամբ վերջինիս է ներկայացրել

20.01.2021թ.-ին տրված թիվ 192 և թիվ 193 կանխիկ փողի ձևով ներկայացված վճարման հանձնարարագրերը՝ համապատասխանաբար 2 495 400 ՀՀ դրամի և 2 167 900 ՀՀ դրամի չափով՝ որպես «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնման ընթացակարգի հայտի ապահովում, ինչպես նաև ներկայացվել է 20.01.2021թ.-ին տրված թիվ 1-21 համարի լիազորագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.01.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ Հանձնաժողովը արձանագրել է, որ հրավերով սահմանված հայտերի կազմման և ներկայացման, բացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանում է մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, ինչով պայմանավորված դրանք գնահատվել են բավարար և արձանագրության 4.2 կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ին՝ որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի պատասխան Բողոքներ քննող անձի 09.02.2021թ.-ի թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/2417-2021 գրության՝ հայտնել է, որ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի կողմից 20.01.2021թ.-ի հայտի ապահովման թիվ 900008000466 հաշվին վճարված 2 167 900 ՀՀ դրամ և 2 495 400 ՀՀ դրամ գումարները հաշվեգրվել են գանձապետական հիշյալ հաշվին 21.01.2021թ.-ին, ժամը՝ 10:07-ին:

Պատվիրատուի կողմից Բողոքներ քննող անձին ներկայացված գրանցամատյանի համաձայն՝ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վճարման հանձնարարագրերը հաշվառվել են պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում 20.01.2021թ.-ին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Հանձնաժողովը, 20.01.2021թ.-ին «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի կողմից ստանալով 20.01.2021թ.-ին տրված թիվ 192 և թիվ 193 կանխիկ փողի ձևով ներկայացված վճարման հանձնարարագրերը, ինչպես նաև 20.01.2021թ.-ին տրված թիվ 1-21 համարի լիազորագիրը, չկիրառելով Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերը, այն է՝ ծանուցել մասնակցին, առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը ներկայացնել հրավերով սահմանված փաստաթղթերը, սույն դեպքում, թույլ չի տրվել դրույթների խախտում, քանի որ հիշյալ դրույթների իմաստով հայտերը բացվում են և գնահատվում նիստի ընթացքում, որոշակի ժամանակահատվածում, որի

շրջանակներում մասնակիցների կողմից կարող են ներկայացվել անհրաժեշտ կամ հավելյալ փաստաթղթեր: Հատկապես այն դեպքում, երբ Օրենքով, Կարգով և Հրավերով վերը նշված գործողությունների իրականացնելու սահմանապակում նախատեսված չէ:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապատասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուն և Հանձնաժողովը գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս չպետք է վերջիններին ծանրաբեռնի այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժի ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Անդրադառնալով թիվ «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի անվամբ 20.01.2021թ.-ին տրված թիվ 1-21 լիազորագրի վերաբերյալ բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման

անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ

իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին: Նոտարական ձև պահանջող գործարքներ կնքելու համար լիազորագիրը պետք է վավերացնի նոտարը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Հրավերի 2.7-րդ կետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ նաև՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ հայտը ստորագրելու լիազորությունը հաստատող փաստաթուղթը՝ լիազորագիրը, հանդիսանում է հայտում ներառվող փաստաթուղթ, որը ներկայացվում է հայտը ստորագրելու պատշաճ լիազորությունը հավաստելու համար: Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցելու դեպքում պետք է ներկայացնի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված

անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Սույն գործի փաստերի հիման վրա, ուսումնասիրելով «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի կողմից էլ. փոստի միջոցով Պատվիրատուին ներկայացված լիազորագիրը՝ բովանդակային առումով նույնպես, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ այն ելնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի լիազորագրին վերաբերող դրույթներից և չի հակասում վերջիններին: Ներկայացված լիազորագրի բովանդակությունը լիարժեք թույլ էր տալիս լիազորված անձին ստորագրել մրցույթի հայտի փաստաթղթերը: Ընդ որում, հարկ է փաստել, որ Կարգով և Հրավերով չեն սահմանվել լիազորագրի ձևի և բովանդակության վերաբերյալ լրացուցիչ պահանջներ, որոնց պետք էր այն համապատասխաներ (որոշակի ձևաթղթի վրա կնքելը և այլն):

Ամփոփելով վերոնշյալները, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի անվամբ 20.01.2021թ.-ին տրված թիվ 1-21 լիազորագիրը ներկայացվել է ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:

Անդրադառնալով թիվ «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Անապատ-2» Ա/Կ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման իրավաչափության վերաբերյալ բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը փաստում է հետևյալը.

Հրավերով, մասնավորապես՝ բանկային երաշխիքի հավելվածով (հավելված 3) հստակ սահմանվել է, որ հայտի ապահովման գումարն ենթակա է փոխանցման բենեֆիցիարի (Պատվիրատուի) հաշվեհամարին, իսկ 900008000466 հաշվեհամար Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված գանձապետական հաշիվն է, որը կիրառելի է կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովման դեպքում: Ուստի բողոքաբերի այն պնդումը, որ «Անապատ-2» Ա/Կ-ի կողմից ներկայացված Երաշխիքում պետք է նշվեր փոխանցման ենթակա գումարի 900008000466 հաշվեհամարը, անհիմն է:

Ինչ վերաբերում է Երաշխիքի ներկայացման ժամկետին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 20.01.2021թ.-ի ժամը 16:00 ներառյալ, իսկ «Անապատ-2» Ա/Կ-ի կողմից «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին որպես հայտի ապահովում ներկայացված

«Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից թիվ 652-712 և 652-711 բանկային երաշխիքները բանկի կողմից տրամադրվել են (թվագրվել են) 22.01.2021թ.-ին:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ «Անապատ-2» Ա/Կ-ն Երաշխիքը Հանձնաժողովին է ներկայացրել Կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետի խախտմամբ:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, դրանց՝ իրավական նորմերի հետ համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կարգի 42-րդ կետն ուղղակիորեն սահմանում է մասնակցի հայտն անբավարար գնահատելու և մերժելու դեպքերը, ներառյալ այն, երբ մասնակիցը Կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված, մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, ուստի տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից «Անապատ-2» Ա/Կ-ի հայտը բավարար գնահատելու մասին կայացված որոշումն իրավաչափ չէ և չի բխում Կարգի 42-րդ կետով և 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված պահանջներից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները սույն որոշմամբ բերված իրավական ու փաստական հանգամանքների և արված վերլուծությունների ամբողջությամբ հիմնավոր են մասնակի՝ «Անապատ-2» Ա/Կ-ի մասով, իսկ գնահատող հանձնաժողովի կողմից «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին կայացված որոշումն իրավաչափ է, որպիսի պայմաններում ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակիորեն, իսկ մնացած մասով՝ մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից 25.01.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/03 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել «ՀՀ ՍՄԳՀ ԳՀԱՇՁԲ 01/2021» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադերեցնել՝ «Անապատ-2» Ա/Կ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ